ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» դեկտեմբերի 2020 թվականի N 371

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.04.2013թ. թիվ 1166 սեղանամատյանով կնքված անշարժ գույքի /ոչ բնակելի տարածքի/ վարձակալության պայմանագրի, 25.12.2015թ. թիվ 2762 գրանցամատյանով հաստատված վերը նշված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնության և 18.12.2017 թվականի թիվ 3257 գրանցամատյանով հաստատված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին համաձայնագրի համաձայն, Ստեփանավան համայնքի Միլիոն փողոց թիվ 1 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկից, ընդհանուր 83.88 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը վարձակալության իրավունքով մինչև 30.07.2021թ. ժամկետով տրամադրվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Հիմք ընդունելով ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից ներկայացված դիմումը, վերը նշված պայմանագիրը և համաձայնությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Երկարաձգել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Միլիոն փողոց թիվ 1 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ն հարկում գտնվող 83.88 քմ ընդհանուր մակերեսով ոչ բնակելի տարածքի վարձակալության ժամկետը մինչև 30.07.2021թ.:
2. Ոչ բնակելի տարածքի վարձավճարի չափը թողնել անփոփոխ համաձայն 25.12.2015թ. թիվ 2762 գրանցամատյանով հաստատված համաձայնության 2 կետի:
3. Օրենքով սահմանված կարգով ՀՀ ԱՍՀՆ-ի հետ կնքել ժամկետի երկարաձգման համաձայնագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» դեկտեմբերի 2020 թվականի N 372

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 29.11.2019 թվականի N 86-Ն որոշման 4-րդ կետի բ ենթակետը՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի 2020 թվականի բյուջեով նախատեսված «Հանգստի և սպորտի ծառայություններ» ծրագրի նախահաշվի (բաժին 8 խումբ 1 դաս 1) «4637 – Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից պակասեցնել 4000000 /չորս միլիոն/ ՀՀ դրամ գումար:
2. «Սոցիալական հատուկ արտոնություններ» (բաժին 10 խումբ 7 դաս 1) ծրագրի նախահաշվի «4729 – Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարը ավելացնել 4000000 /չորս միլիոն/ ՀՀ դրամով:
3. Ստեփանավան համայնքի 2020 թվականի բյուջեով նախատեսված «Բնակարանային շինարարություն» ծրագրի նախահաշվի (բաժին 6 խումբ 1 դաս 1) «5113 – Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարից պակասեցնել 470000 /չորս հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ գումար:
4. «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» (բաժին 1 խումբ 1 դաս 1) ծրագրի նախահաշվի «5129 – Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գումարը ավելացնել 470000 /չորս հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ